«ՎՐԱՍՏԱՆԸ» 100 ՏԱՐԵԿԱՆ Է

«ԿՈՎԿԱՍ», «ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ԵՎ «ՄՇԱԿ» ԹԵՐԹԵՐԻ ԱՐԺԱՆԻ ԺԱՌԱՆԳՈՐԴԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Կարող ենք ասել, որ Վրաստանում լույս տեսնող ոչ վրացալեզու պարբերականների թվում հայկական թերթերն իրենցից ներկայացնում էին նշանակալից աղբյուր տեղի բնակչության մշակութային եւ հասարակական միասնության հետազոտման գործում:

«Վրաստան» թերթն իր առաջին համարից ձեռնամուխ եղավ վրաց պետականության կառուցման ծառայությանը: Նրա էջերում արտացոլվեցին Վրաստանի բռնազավթումն ու դրան հաջորդած խորհրդային կյանքի բոլոր իրադարձությունները: 1941-1945 թվականների թերթի բոլոր համարներում հրապարակվում էր տեղեկատվություն Վրաստանին եւ ողջ Կովկասին ֆաշիստական Գերմանիայի կողմից հասցրած վնասի ու զոհերի մասին: Թերթը, Վրաստանում լույս տեսնող մյուս պարբերականների հետ միասին, մասնակցում էր Կովկասի պաշտպանության գործին: Իր մեկդարյա պատմության ընթացքում, թերթի էջերում չի տպագրվել հակավրացական բովանդակությամբ եւ ոչ մի հրապարակում:

Թերթն իրենից ներկայացրել եւ այսօր էլ շարունակում է մնալ Կովկասի երկու նշանակալի ազգերի՝ հայերի եւ վրացիների բազմադարյա բարեկամության մատենագիրը: Վրաստանի նշանակալի իրադարձությունների հետ միասին, «Վրաստանը» երկրի քաղաքացիներին մատուցում է նաեւ Հայաստանի իրադարձությունները: Թերթի գլխավոր խմբագիր Վան Բայբուրթյանն արժանապատիվ տեղ է զբաղեցրել Վրաստանի այնպիսի լեգենդար հայ խմբագիրների շարքում, ինչպիսին Գրիգոր Արծրունին էր, միայն այն տարբերությամբ, որ պարոն Վանը անհամեմատ առավել քաղաքական բարդ իրավիճակում կարողացավ փրկել թերթը, եւ «Վրաստանն» այսօր էլ Վրաստանում հրապարակվող ոչ վրացալեզու մամուլի առաջամարտիկն է:

Վրաստանի խորհրդարանի Ազգային գրադարանը հպարտանում է այն փաստով, որ իր տնօրինության տակ ունի «Վրաստան» թերթի ամենակատարյալ հավաքածուն:

ԼԵՎԱՆ ԹԱՔԹԱՔԻՇՎԻԼԻ
Վրաստանի խորհրդարանի Ազգային գրադարանի գրադարանային ռեսուրսների դեպարտամենտի փոխտնօրեն

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՀՈԲԵԼՅԱՆԴ, «ՎՐԱՍՏԱՆ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Գրում էի մեր տաբածղուրցիների ձեռքբերումների, հաջողությունների ու նաեւ առանձին բացթողումների, թերությունների մասին: Հատկանշական է, որ թերթը մշտապես արձագանքել է իմ գրածներին, եղել են դեպքեր, երբ նույնիսկ աշխատակից են գործուղել մեր շրջան ներկայացված այս կամ այն փաստի պարզաբանման համար:

Խոսել ներկայիս «Վրաստանի» նշանակության ու դերի մասին, կարծում եմ, ավելորդ է, քանի որ դա այնքան ակնհայտ է, ինչպես երկու անգամ երկուսը՝ չորս է եւ ապացուցման կարիք չունի: Բավական է նշել, որ տասնամյակներ շարունակ տաբածղուրցիներիս համար «Վաստանն» այն միակ պարբերականն է, որը մեզ տեղեկատվություն էր հասցնում ինչպես Վրաստանի սոցիալ-տնտեսական, վիրահայ համայնքի կյանքի մասին, այնպես էլ՝ նորություններ Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ: Թերթից տեղեկանում ենք այն օրենսդրական փոփոխությունների մասին, որոնք հետո օգնում են մարդկանց կազմակերպել իրենց գործը, առնչվել պետական տարբեր ծառայությունների հետ, կարգավորել սոցիալական ու տնտեսական բնույթի այս կամ այն հարցը: Թեկուզ դրա համար թերթն ու նրա աշխատակազմն արժանի են խորին երախտիքի:

Այսօր, երբ նշվում է «Վրաստանի» առաջին համարի լույսընծայման մեկդարյա հոբելյանը, մեր սիրելի «Վրաստանին» մաղթում եմ երկարակեցություն, երիտասարդական ավյուն՝ ստանձնած, իրոք, նշանակալի առաքելությունը պարզճակատ իրականացնելու համար, իսկ խմբագրակազմին՝ երջանկություն, բարօրություն եւ ստեղծագործական նոր բարձունքներ:

Հարգանքներով՝

ՌՈՒԲԵՆ ՂԱՆԴԻԼՅԱՆ
Ախալքալաքիի մունիցիպալիտետ գյուղ Տաբածղուրի

ՀՐԱՏԱՊ ԹԵՄԱ

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ՝ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՄԻԱԿ ԿԻՆ ՔԱՂԱՔԱՊԵՏ ԱՆԻ ՄՈՍՈՅԱՆԻ ՀԵՏ

Վերջին ժամանակներում շատ է խոսվում ու գրվում տարբեր բնագավառներում գենդերային հավասարության պահպանման, էկոնոմիկայում, քաղաքականության մեջ կանանց դերի ուժեղացման անհրաժեշտության մասին: Ստորեւ ձեր ուշադրությանն ենք ներկայացնում Նինոծմինդայի մունիցիպալիտետի «Արշալույս» թերթի խմբագիր Լուսինե Վարդանյանի հարցազրույցը Վրաստանում միակ կին, Նինոծմինդայի մունիցիպալիտետի քաղաքապետ ԱՆԻ ՄՈՍՈՅԱՆԻ հետ, որտեղ շոշափվում են գենդերային քաղաքականությանն առնչվող արդի հարցեր:

Փորձագետներն ասում են, որ համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր խելացի կին ցանկացած ոլորտում շատ ավելի արդյունավետ է աշխատում, որովհետեւ կնոջ պատասխանատվության զգացումը շատ ավելի բարձր է, քանի որ նա մայր է եւ աշխատանքին նույն կերպ է մոտենում, ինչ ընտանիքին ու զավակներին:

- Տիկին Մոսոյան, կինը քաղաքականության մեջ մեր հասարակության մեծամասնության դիտարկմամբ համարյա արտառոց երեւույթ է: Այս տարի լրանում է Ձեր պաշտոնավարման 4 տարին: Կին-քաղաքապետ լինելն ինչպիսի՞ զգացումներ է առաջացնում:

- 2017-ին, երբ երկրի «Վրացական երազանք» կառավարող կուսակցության կողմից առաջարկ ստացա՝ առաջադրվել Նինոծմինդայի մունիցիպալիտետի քաղաքապետի թեկնածուի պաշտոնում, մի տեսակ լարվածություն ու թեթեւակի տարակուսանք կար: Ինչո՞ւ չկան ուրիշ կանայք այս ոլորտում, մի՞թե սա իսկապես միայն տղամարդու աշխատանք է, եւ արդյոք այն վե՞ր է կնոջ ուժերից: Սակայն այսօր, հանդիսանալով միակ կին-քաղաքապետն ամբողջ Վրաստանում, չորս շուրջօրյա եւ քրտնաջան աշխատանքային տարիների հեռավորությունից վստահ կարող եմ ասել, որ կին-պաշտոնյա լինելու հանգամանքը ոչ մի պարագայում ստվեր չի գցում աշխատանքի որակի վրա: Կան խնդիրներ, որոնք անխուսափելի են եւ չեն շրջանցում նաեւ տղամարդ ղեկավարներին, դրանք իրենց բնույթով ու ծավալով պայմանավորված չեն ղեկավարի կին կամ տղամարդ լինելով: Ուղղակի այս պարագայում, կինը համադրում է երկու իրարից խիստ տարբեր ոլորտներ՝ ընտանիք եւ քաղաքականություն:

Ինչպիսի՞ զգացումներ ունեմ: Միանշանակ՝ պատասխանատվության: Պատասխանատվություն ինչպես իմ գործողությունների, այնպես էլ՝ քաղաքացիների համար, նրանց բարեկեցիկ, ժպիտով լի առօրյայի համար, քանի որ երբ նրանց վստահության քվեն ստանալով ստանձնեցի քաղաքապետի պաշտոնը, դրա հետ միասին ստանձնեցի նաեւ պատասխանատվություն մունիցիպալիտետի բոլոր բնակիչների նկատմամբ:

- Առաջնորդվում եք «Քիչ խոստումներով, լավ աշխատանք» կարգախոսով: Խնդրում եմ հակիրճ պատմել այս տարիների ընթացքում իրականացրած ծրագրերի մասին:

- Ակնհայտ է, որ մունիցիպալիտետում տարեցտարի աճում են ենթակառուցվածքների զարգացման եւ վերականգնման ծրագրերի ծավալն ու ֆինանսավորումը. այսպես, օրինակ, եթե 2014 թվականին ենթակառուցվածքների աշխատանքների համար հատկացված գումարը 4 միլիոն լարի էր, 2021-ին այն կազմեց 8 միլիոն լարի:

Տարածաշրջանային զարգացման հիմնադրամի կողմից մեր մունիցիպալիտետում 2019-ին ֆինանսավորվել եւ իրականացվել է 3 198 576 լարիի ենթակառուցվածքների նախագիծ, 2020-ին՝ 4 660 278 լարիի նախագիծ: Նախորդ տարի «Բարձրալեռ բնակավայրերի զարգացման հիմնադրամի» ֆինանսավորմամբ կյանքի է կոչվել 438 000 լարիի ենթակառուցվածքների ծրագիր: 2020-ին «Գյուղի զարգացման ծրագրով» իրականացվել է 444 000 լարիի շուրջ 42 նախագիծ:

Այս տարի մեր մունիցիպալիտետում ենթակառուցվածքների լայնածավալ ծրագրեր են իրականացվում, որոնք ընդգրկում են բոլոր ոլորտները՝ ճանապարհաշինություն, դպրոցաշինություն, բարեկարգում...

Մասնավորապես, «Տարածաշրջանային զարգացման հիմնադրամից» ֆինանսավորվում է 5 749 102 լարի արժողությամբ 4 նախագիծ: Բարձրալեռ բնակավայրերի զարգացման հիմնադրամից՝ 426 316 լարիի 1 նախագիծ: Գյուղի զարգացման ծրագրով այս տարի իրականացվում է 444 000 լարի արժողությամբ 39 նախագիծ:

Մունիցիպալիտետի 8 դպրոցի վերանորոգման համար հատկացված է 461 871 լարի գումար:

- Որո՞նք են Նինոծմինդայի մունիցիպալիտետի այսօրվա խնդիրները: Ի՞նչ է արվում դրանց լուծման համար:

- Խնդիրներն, իհարկե, բազմաբնույթ են: Բոլորն էլ կարեւոր նշանակություն ունեն՝ սկսած քաղաքաշինությունից, սոցիալ- տնտեսական զարգացումից, բնապահպանությունից, կանաչապատումից: Բայց եթե պետք է առանձնացնել մի քանիսը, ապա առաջնայինը կնշեմ բնակչության զբաղվածության հարցը: Այսօր մեր երիտասարդների գերակշիռ մեծամասնությունը հակված է ստանալ բարձրագույն կրթություն, եւ նրանց համապատասխան աշխատանքով ապահովելը մեր խնդիրն ու հոգսն է: Հաջորդը կառանձնացնեի զբոսաշրջության զարգացման կարեւորությունը: Բնությունը մեզ պարգեւատրել է մարգարիտներ հանդիսացող լճերով: Մենք պլանավորում ենք ենթակառուցվածքների զարգացում լճափնյա տարածքներում, ինչը եւ անկասկած նպաստելու է զբոսաշրջության զարգացմանը:

Արդիական է նաեւ գյուղերում մանկապարտեզների շինարարությունն ու լրիվ աշխատանքային օր ապահովելը:

Ըստ իս, երկրորդական հարց չկա: Պետք է անենք ամեն բան, որպեսզի ստեղծենք այնպիսի պայմաններ, որ խնդիրները հասցնենք նվազագույնի:

- Ձեր աշխատանքում մեծ տեղ եք հատկացնում բնակիչների հետ հանդիպումներին, շփումներին: Ձեր կարծիքով, ո՞րն է քաղաքապետ-քաղաքացի հարաբերությունների արդյունավետ հաստատման եւ ամրապնդման տեսլականը:

- Համբերությունը, հարգանքը, անկեղծությունն ու փոխհասկացողությունը: Քաղաքապետն ու քաղաքապետարանը պետք է անմիջապես կանգնած լինեն քաղաքացու կողքին:

- Բարեկարգ Նինոծմինդան եւ բարեկեցիկ Նինոծմինդացին՝ Ձեր պատկերացումներում:

- Մեր Նինոծմինդան այսօր էլ շատ ինքնատիպ է ու գեղեցիկ: Բայց, նախեւառաջ կարծում եմ, պետք է հասնենք նրան, որ ունենանք հարմարավետ քաղաք, հարմարավետ՝ նորածնից մինչեւ տարեց մարդու, առողջ եւ որոշակի խնդիրներ ունեցող մարդու, հարմարավետ՝ նինոծմինդացու եւ զբոսաշրջիկի համար, այսինքն, պետք է ունենանք առաջադեմ քաղաք՝ պահպանելով մեր լավագույն արժեքներն ու ավանդույթները: Իսկ ամենակարեւորը՝ միշտ ժպտացող, միմյանց օգնելու եւ աջակցելու պատրաստակամ նինոծմինդացիներ: Ահա բարեկարգ քաղաքի ու բարեկեցիկ կյանքի իմ տեսլականը:

Բազում ծրագրեր ունենք, որոնք, համոզված եմ, մոտ ապագայում կյանքի կկոչենք:

COVID - 19

ԱՌԱՋԻԿԱ ԵՐԵՔ ԱՄՍՈՒՄ ՃՐԱԳՐՎՈՒՄ Է ՄԵԿՈՒԿԵՍ ՄԻԼԻՈՆ ՄԱՐԴՈՒ ՊԱՏՎԱՍՏՈՒՄ

ԱՐԴԵՆ ՊԱՏՎԱՍՏՎԵԼ Է ՇՈՒՐՋ 262 ՀԱԶԱՐ, ԼՐԻՎ ՊԱՏՎԱՍՏՈՒՄ Է ԱՆՑԵԼ 100 ՀԱԶԱՐ ՄԱՐԴ

Վրաստանի առողջապահության նախարար էկատերինե Տիկարաձեի հայտարարությամբ, լավ կլինի, եթե հաջորդ երեք ամիսներին ամեն ամիս կորոնավիրուսի դեմ կես միլիոն մարդ պատվաստվի:

Նախարարի խոսքով, այս փուլում պատվաստման գործընթացում ներգրավված է մինչեւ 200 կլինիկա, որտեղ աշխատում է 281 պատվաստող բրիգադ: Յուրաքանչյուր բրիգադ 8-ժամյա աշխատանքային օրվա ընթացքում պատվաստում է 60 բուժառուի: Նախարարը նշեց, որ նախատեսվում է ավելացնել բրիգադների քանակը եւ նրանց աշխատանքային ժամերը:

- Այս փուլում երկրում մոբիլիզացված ռեսուրսներով մենք կարող ենք օրական պատվաստել 17 000 քաղաքացու, ինչը կես միլիոն քաղաքացիների պատվաստում է 25-օրյա աշխատանքի արդյունքում: Դա բավականին լավ ցուցանիշ կլինի, եթե հաջորդ երեք ամիսների ընթացքում մենք կարողանանք միասին աշխատել եւ ամեն ամիս պատվաստել կես միլիոն քաղաքացու,- ասել է Տիկարաձեն:

Առողջապահության նախարարի խոսքով, որոշվել են մի քանի վայրեր, որտեղ կկազմակերպվեն պատվաստման համար նախատեսված տարածքներ: Այդ վայրերից է Թբիլիսիի «Հուալինգը»: Համեմատաբար փոքր կենտրոնի բացում է նախատեսվում Լիլոյում:

Նմանատիպ պատվաստումների լրացուցիչ կենտրոններում քաղաքացիները կկարողանան պատվաստվել միայն չինական արտադրության պատվաստանյութերով, իսկ Pfizer եւ Astrazeneca պատվաստանյութերը կլինեն միայն կլինիկաներում՝ ելնելով անվտանգության նկատառումներից:

Վրաստանում այսօրվա դրությամբ իրականացվել է 261 652 պատվաստում: Լրիվ պատվաստվել է ավելի քան 100 հազար մարդ:

Այս շաբաթվա վերջում Վրաստանը կստանա 1 մլն դեղաբաժին «SINOVAK» եւ «SINOFARM» տեսակի պատվաստանյութ:

ՊԱՐԵՏԱՅԻՆ ԺԱՄԸ ՎԵՐԱՅՎԵՑ

Ինչպես արդեն հաղորդել ենք, միջգերատեսչական համակարգող խորհրդի որոշմամբ, հունիսի 30-ի ժամը 23:00-ից, տեղաշարժման սահմանափակումը՝ պարետային ժամը, վերացվեց:

Հիշեցնենք, որ տեղաշարժը նվազեցնելու համար, գործում էր Պարետային ժամ 2020 թվականի նոյեմբերի 28-ից: Ժամը 21:00-ից 05:00-ն արգելված էր ինչպես ոտքով, այնպես էլ՝ տրանսպորտային միջոցներով անձանց տեղաշարժը, ինչպես նաեւ հասարակական տարածքում գտնվելը: 2021 թվականի հունիսի 1-ից, սահմանափակման ժամկետը կրճատվեց, եւ գործում էր ժամը 23:00-ից առավոտյան ժամը 04:00-ն:

ՏԱԳՆԱՊԱԼԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ. ԲԱՑ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԴԻՄԱԿՆԵՐ ԿՐԵԼՈՒ ՊԱՀԱՆՋԻ ՎԵՐԱՑՈՒՄՆ ԱՎԵԼԱՑՐԵՑ ՎԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ԹԻՎԸ

Ինչպես արդեն հաղորդել ենք, մինչգերատեսչական համակարգող խորհրդի որոշմամբ, հունիսի 22-ից վերացել էր բաց տարածքներում դիմակ կրելու պահանջը:

Որոշումից հետո, մեկ շաբաթվա ընթացքում Վրաստանում կորոնավիրուսով վարակման դեպքերի թիվը եւ դրական ցուցանիշը կտրուկ աճեց: Փորձագետների մի մասը վարակումների թվի ավելացումն առնչում է համակարգող խորհրդի վերոնշյալ որոշման հետ, թեպետ առողջապահության նախարարությունը համամիտ չէ նման կարծիքի հետ՝ նշելով, որ վարակումների վիճակագրության ավելացումն անմիջականորեն կապված է, այսպես կոչված, Հնդկական շտամի շրջանառության ակտիվացման հետ:

Խորագիրը պատրաստեց ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍ. ԱՇԽԱՐՀՈՒՄ ՎԱՐԱԿՎԱԾՆԵՐԻ ԹԻՎԸ ԳԵՐԱԶԱՆՑԵՑ 183 ՄԻԼԻՈՆԸ

COVID-19-ի հաստատված դեպքերի թիվն աշխարհում անցել է 183 463 377-ը: Կորոնավիրուսի հետազոտական կենտրոնների տվյալների համաձայն, մահացածների թիվը գերազանցել է 3 972 549-ը: Ապաքինվել է 167 միլիոն 961 հազար 765 մարդ:

Վարակվածների թվով աշխարհում առաջին տեղում **ԱՄՆ**-ն է, որտեղ կա հաստատված **34 561 403** դեպք: Այստեղ մահացածների թիվը **620 645** է, երկրորդ տեղում **Հնդկաստանն** է, որտեղ հաստատված դեպքերի թիվը հասել է **30 458 251**-ի, մահացածներինը՝ **400 312**-ի:

Վարակվածների թվով հաջորդ տեղում **Բրազիլիան** է: Այստեղ վարակվել է **18 622 304**, մահացել՝ **520 189** մարդ: **Ֆրանսիայում** կորոնավիրուսով վարակվել է **5 777 965**, վարակի հետեւանքով մահացել՝ **111 111** մարդ: Ֆրանսիային հաջորդում են Ռուսաստանը, Թուրքիան, Մեծ Բրիտանիան, Արգենտինան, Կոլումբիան ու Իտալիան:

Հայաստանում, ընդհանուր առմամբ, վարակվածների թիվը հասնում է **225 339-ի**, մահացածներինը՝ **4 518-ի**, ապաքինվածներինը՝ **216 997-ի**:

Ադրբեջանում վարակվածների թիվը կազմում է **336 122** մարդ: Վարակից մահացել է **4 975,** ապաքինվել՝ **330 275** մարդ:

Վրաստանում, վերջին տվյալներով, վարակվել է **368 022,** մահացել՝ **5 335,** ապաքինվել՝ **353 231** մարդ:

*Հուլիսի 2-ին կորոնավիրուսով վարակման **964** նոր դեպքերից **629-ը Թբիլիսիում է, Աջարիայում՝ 25, Իմերեթիում՝ 77, Քվեմո Քարթլիում՝ 54, Շիդա Քարթլիում՝ 40, Գուրիայում՝ 9, Սամեգրելո-Զեմո Սվանեթիում՝ 30, Կախեթիում՝ 71, Մցխեթա-Մթիանեթիում՝ 12, Ռաճա-Լեչխումիում եւ Քվեմո Սվանեթիում՝ 8, Սամցխե-Ջավախեթիում՝ 9:***

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ԸՆԴՈՒՆՎԵՑԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Բարեփոխման արդյունքում, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում համամասնական մասնաբաժինը բարձրացվում է, եւ մեծամասնական ընտրությունների համար սահմանվում 40 տոկոսի ընտրաշեմ: Ընտրական հանձնաժողովը կհամալրվի 8 + 9 հավասարության սկզբունքով, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահն ընտրվելու է նոր կանոնների համաձայն: Ընտրական վարչակազմը ներգրավվելու է բոլոր երեք մակարդակներում՝ 7-ը մասնագիտական եւ 9-ը կուսակցության կողմից նշանակված անդամներով: Բացի այդ, ԿԸՀ նախագահի տեղակալի պաշտոնում կլինի ընդդիմադիր ներկայացուցիչ:

Կներկայացվի ընդդիմության փոխնախագահի պաշտոնը, ընտրատեղամասերում կներդրվի 100 մետրանոց շառավիղ, եւ պատժամիջոցներ կսահմանվեն 100 մետրանոց շառավղի կանոնները խախտելու համար: Կընդլայնվի պետական ծառայողների շրջանակը: Կկիրառվի նաեւ էլեկտրոնային տեխնոլոգիաների սկզբունքը, 10 տոկոս տեղամասերի պատահական հայտնաբերման եւ վերահաշվարկի սկզբունքը: Արգելվում է տեղամասի կողմից փոփոխությունների արձանագրություն կազմել տեղամասային փաստաթղթերը կնիքելուց հետո, եւ փոխել միայն շրջանի կողմից փոփոխությունների արձանագրության հաշվարկի արդյունքում: Սահմանված են տեղամասերի պարտադիր վերահաշվարկի հստակ չափորոշիչներ. Սահմանվում է այն անձը, որը պատասխանատու է տեղամասի փաստաթղթերի կնիքման համար: Բողոքների ժամկետները կերկարաձգվեն: Կստեղծվի հավատարմագրերի գրանցման ռեեստր: Բողոքները ներկայացվելու են էլեկտրոնային եղանակով, բողոքարկվելու է խախտման մասին զեկույց կազմելու մերժումը: Վեճերը վերահսկելու եւ վերահաշվարկելու համար, կստեղծվի ԿԸՀ խորհրդատվական խումբ:

Հունիսի 29-ին Վրաստանի խորհրդարանը՝ երրորդ եւ վերջին ընթերցմամբ, հաստատեց Ընտրական օրենսգրքում փոփոխությունների նախագիծը: Ընտրական բարեփոխումներին աջակցել է 86 պատգամավոր: Դեմ է քվեարկել երեքը՝ անկախ պատգամավոր Թակո Չարկվիանին եւ «Ազգային շարժում» խմբակցության անդամներ Նատո Չխեիձեն ու Ռոստոմ Չխեիձեն:

Խորհրդարանական ընդդիմությունից ընտրական փոփոխություններին չեն աջակցել «Միասնական ազգային շարժում. Իշխանությունը միասնության մեջ է» եւ «Լելոն՝ Վրաստանի համար» խմբակցությունները:

Խորագիրը պատրաստեց ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆԸ

ԿԸՀ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ԿԸՆՏՐԻ ՁԱՅՆԵՐԻ ԵՐԿՈՒ ԵՐՐՈՐԴՈՎ

ՀՐԱԺԱՐԱԿԱՆ ՏՎԵՑ ԿԸՀ ՆԱԽԱԳԱՀ ԹԱՄԱՐ ԺՎԱՆԻԱՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

- Ես ուզում եմ տեղեկացնել հասարակությանը, որ որոշում եմ կայացրել 2021 թվականի հուլիսի 1-ից չերկարաձգել Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի լիազորությունները, ինչը թույլ կտա քաղաքական կուսակցություններին ԿԸՀ-ի նախագահին ընտրել նորացված ընտրական օրենսգրքով:

Չնայած, որ օրենսդրության համաձայն ես հնարավորություն ունեին եւս երկու տարի շարունակել գործունեությունս, կարծում եմ, որ Շառլ Միշելի համաձայնագրով ընդունված ընտրական կանոնակարգերը նոր իրողություն են բերել: Ըստ այդմ, ԿԸՀ-ի նոր նախագահի ընտրությունը նոր կանոնով կլինի նպաստող լրացուցիչ գործոն լայն քաղաքական համաձայնության համար:

Թամար Ժվանիան գրեթե ութ տարի եղել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը, անցկացրել 6 ընդհանուր եւ մի քանի տարբեր տեսակի միջանկյալ ընտրություններ, արժանացել է միջազգային ճանաչման, առաջընթաց գրանցել ինստիտուցիոնալ զարգացման, ներառականության, թափանցիկության եւ հաշվետվողականության տեսանկյունից, ստացել 7 միջազգային մրցանակ:

- Դա ընտրությունների յուրաքանչյուր վարչարարի վաստակն է: Այդ պատճառով ես կցանկանայի շնորհակալություն հայտնել ԿԸՀ-ի թիմին, յուրաքանչյուր աշխատակցի, շրջանի եւ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներին, ովքեր անձնուրաց եւ քրտնաջան աշխատանք են կատարել,- գրել է Թամար Ժվանիան:

ՍՏԵՂԾՎՈՒՄ Է ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԸՀ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ԱՌՆՈԼԴ ՍՏԵՓԱՆՅԱՆԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ

Հուլիսի 1-ին Վրաստանի նախագահը ստորագրեց հրամանագիր ԿԸՀ նախագահության եւ ԿԸՀ անդամության թեկնածուներին ընտրելու համար բաց մրցույթ անցկացնելու եւ մրցութային հանձնաժողով ստեղծելու մասին:

Հրամանագրով հայտարարվել է բաց մրցույթ ԿԸՀ նախագահի եւ ԿԸՀ անդամի երկու թափուր պաշտոնների համար: Նախագահի հրամանագրով նաեւ ստեղծվել է մրցութային հանձնաժողով, որի նախագահ է նշանակվել Տեղեկատվության ազատության զարգացման ինստիտուտի գործադիր տնօրեն Գիորգի Կլդիաշվիլին:

10 անդամից կազմված հանձնաժողովի կազմում ընդգրկվել է նաեւ համաքաղաքացիական «Բազմազգ Վրաստան» միության վարչության նախագահ Առնոլդ Ստեփանյանը:

Հանձնաժողովը, համաձայն «Վրաստանի ընտրական օրենսգրքի», պետք է ապահովի ԿԸՀ նախագահի եւ ԿԸՀ անդամության թեկնածուների ընտրությունը եւ նրանց ներկայացնի Վրաստանի նախագահին:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԿՆԵՐԿԱՅԱՑՎԵՆ ԸՆՏՐԱԿԱՆ ԵՐԵՔ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐ

ՎԵՐՁՆԱՀԱՇՎԱՐԿՈՎ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»՝ 53,91, «ՀԱՅԱՍՏԱՆ» ԴԱՇԻՆՔ՝ 21,09, «ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ» ԴԱՇԻՆՔ՝ 5,22 ՏՈԿՈՍ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ԿԸՀ նախագահ Տիգրան Մուկուչյանի խոսքով, ընտրողների ընդհանուր 2 մլն 595 հազար 512 թվից քվեարկությանը մասնակցել է 1 մլն 281 հազար 997 մարդ կամ 49,39 տոկոս:

Հայաստանում գործող օրենսդրությամբ պատգամավորական մանդատները բաշխվում են ընտրական այն սուբյեկտների միջեւ, ովքեր ընտրություններին կհաղթահարեն 5 տոկոսի ընտրաշեմը: Գործող օրենսդրությամբ, Հայաստանի նոր գումարման Ազգային ժողովում կներկայացվի ընտրական երեք սուբյեկտ՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը՝ 688 761 կամ 53,91 տոկոս (71 մանդատ), «Հայաստան» դաշինքը՝ 269 481 կամ 21,09 տոկոս (29 մանդատ) եւ «Պատիվ ունեմ» դաշինքը՝ 66 650 կամ 5,22 տոկոս (7 մանդատ): Ընտրություններին մասնակից մյուս 22 կուսակցություններն ու դաշինքները 5 տոկոսի ընտրաշեմը չեն հաղթահարել:

Հիշեցնենք, որ Հայաստանում արտահերթ խորհրդարանական ընտրություններն անցկացվել են հունիսի 20-ին:

ԱՄՆ-Ը ՀԱՎԱՏԱՐԻՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆԸ

ԱՄՆ նախագահ Ջո Բայդենը շնորհավորել է Հայաստանին հաջող խորհրդարանական ընտրությունների կազմակերպման համար եւ հայտնել Հայաստանի հետ գործընկերության ամրապնդման մտադրության մասին:

ԱՄՆ նախագահը գրառում է կատարել Թվիթերի իր միկրոբլոգում:

- Շնորհավորում եմ Հայաստանի ժողովրդին եւ վարչապետ Նիկոլ Փաշինյանին հաջող խորհրդարանական ընտրությունների կապակցությամբ: Հայաստանի հետ մեր գործընկերությունն ընդհանուր արժեքներից մեկն է, եւ համագործակցությունը ժողովրդավարական բարեփոխումների ու հակամարտությունների կարգավորման հարցում. մենք հավատարիմ ենք այդ գործընկերության ամրապնդմանը,- նշել է Ջո Բայդենը:

ԿԱՆԽԱՏԵՍՎՈՒՄ Է ՎԵՑ ՏՈԿՈՍ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃ

Հուլիսի 1-ին Հայաստանի կառավարության նիստում վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ Հայաստանում 2021 թվականի տնտեսական աճի կանխատեսումները փոխվել են. 2021 թվականին պետական բյուջեի նախագծով կանխատեսվում էր 3,2 տոկոս տնտեսական աճ, բայց կանխատեսումները ծգվում են դեպի վեր եւ 2021 թվականին կանխատեսվում է 6 տոկոս տնտեսական աճ:

- Բայց կարեւոր է, որ մենք այդ ցուցանիշներին զուգահեռ բավականին հաջող իրականացնում ենք պետական բյուջեի եկամտային մասի հավաքագրումները, ու այդ առումով ունենք կիսամյակի գերակատարում,- ասաց նա:

Պետական եկամուտների կոմիտեի (ՊԵԿ) նախագահ Էդվարդ Հովհաննիսյանն իր հերթին նշեց, որ այս տարվա առաջին կիսամյակի ընթացքում հարկային եկամուտների հավաքագրումը կազմել է ավելի քան 750 մլրդ դրամ, այն պայմաններում, երբ ծրագրային ցուցանիշը 683 մլրդ դրամ էր:

- Մեզ հայտնի տեղեկությունների հիման վրա ճշտված ծրագրային ցուցանիշը կազմելու է մոտ 697,7 մլրդ դրամ, եւ այս համեմատության մեջ կարող ենք ասել, որ առաջին կիսամյակի ընթացքում ունենք 52,5 մլրդ դրամի գերակատարում: Սա այն պայմաններում, երբ առաջին կիսամյակում հարկ վճարողներին ու ֆիզիկական անձանց համապատասխան հարկատեսակների մասով վերադարձվել է շուրջ 84 մլրդ դրամ: 2020-ին նույն ժամանակահատվածում վերադարձվել է 65 մլրդ, 2019-ին՝ 52 մլրդ, իսկ 2018-ին՝ 49 մլրդ դրամ,- ընդգծեց ՊԵԿ նախագահը՝ հավելելով, որ այս տարվա առաջին կիսամյակում 24 մլն հատով ավելի շատ գործարքներ են կատարվել, քան նախորդ տարվա առաջին կիսամյակում:

ՀԱՆՎԵԼ Է «SPUTNIK-V»-ՈՎ ՊԱՏՎԱՍՏՄԱՆ ՏԱՐԻՔԱՅԻՆ ՇԵՄԸ

Հուլիսի 1-ից Հայաստանում «SPUTNIK-V» պատվաստանյութով պատվաստումները կարող են իրականացվել ինչպես ռիսկի խմբերում, այնպես էլ՝ 18 եւ բարձր տարիքի անձանց շրջանում՝ ըստ դիմելիության, կամավորական սկզբունքով:

Հայաստանի առողջապահության նախարարության տարածած հաղորդագրության մեջ նշված է, որ նախկինում «SPUTNIK-V» պատվաստանյութով պատվաստումները նախատեսված էին միայն 18 տարեկան եւ բարձր տարիքի քրոնիկ հիվանդների, 18-54 տարեկան բուժաշխատողների, սոցիալական խնամքի կենտրոնների բնակիչների եւ աշխատակիցների համար:

Այսպիսով՝ Հայաստանում առկա COVID-19-ի դեմ բոլոր 3 պատվաստանյութով՝ «AstraZeneca», «GAM-KOVID-VAK» (SPUTNIK-V), «KORONAVAK», կարող են պատվաստվել 18 եւ բարձր տարիքի անձինք՝ ըստ դիմելիության, կամավորության սկզբունքով:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՐՏԱԴՐՎԵԼ ԵՆ «SPUTNIK-V» ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԻ ՆՄՈՒՇՆԵՐ

Հայաստանի առողջապահության նախարարի պաշտոնակատար Անահիտ Ավանեսյանի խոսքով, մոտ ապագայում այդ նմուշները փորձաքննություն կանցնեն:

- Փորձաքննությունից հետո, գուցե հնարավորություն ստեղծվի Հայաստանում պատվաստանյութի սերիական արտադրության համար,- ասաց Ավանեսյանը՝ ավելացնելով, որ այդ գործում արդեն զգալի առաջընթաց կա:

ԱՇՈՏ ՍԱՂՅԱՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՆՈՐ ՆԱԽԱԳԱՀ

Հունիսի 28-ին Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայում (ԳԱԱ) անցկացվեցին նախագահի ընտրություններ: ԳԱԱ նախագահի պաշտոնում առաջադրվել էր երեք թեկնածու՝ ԳԱԱ մաթեմատիկական եւ տեխնիկական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Լենսեր Աղալովյանը, ՀՀ ԳԱԱ նախագահության անդամ, ակադեմիկոս Աշոտ Սաղյանը, ակադեմիկոս Էդուարդ Ղազարյանը:

Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ ընտրվեց ՀՀ ԳԱԱ նախագահության անդամ, ակադեմիկոս Աշոտ Սաղյանը:

Գիտությունների ազգային ակադեմիայի նորընտիր նախագահ Աշոտ Սաղյանը ԳԱԱ արդեն նախկին նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի հետ համատեղ ասուլիսում ներկայացրեց առաջիկա ծրագրերը, անելիքներն ու տեսլականը:

Նշենք, որ Ռադիկ Մարտիրոսյանը ԳԱԱ նախագահի պաշտոնը զբաղեցնում էր 2006 թվականից: Ակադեմիայի կանոնադրության համաձայն, ակադեմիայի նախագահության ղեկավար անձնակազմի ընտրությունները տեղի են ունենում ամեն 5 տարին մեկ: Նախագահը անընդմեջ 2 անգամից ավելի չի կարող ընտրվել:

Ակադեմիայի փոխնախագահ է ընտրվել թղթակից-անդամ, մասնագիտությամբ ֆիզիկոս Հրանտ Մաթեւոսյանը: Իսկ ակադեմիկոս-քարտուղար է ընտրվել գիտական Արթուր Իշխանյանը: Վերընտրվել են ակադեմիկոս-քարտուղարները: Ընտրվել են նախագահության նոր անդամներ, կան նաեւ վերընտրվածներ:

ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ԱՆՀԱՅՏ ԿՈՐԱԾՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Հունիսի 29-ին «Եռաբլուր» զինվորական պանթեոնում հարգանքի տուրք մատուցվեց Անհայտ կորածների հիշատակի օրվա կապակցությամբ: Միջոցառմանը ներկա էին Հայաստանի պաշտպանության փոխնախարար Արման Սարգսյանը, ՊՆ եւ ՋՈՒ ԳՇ բարձրաստիճան զինվորականներ, ազատամարտիկներին միավորող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, անհայտ կորածների հարազատներ ու մարտական ընկերներ:

Զինված ուժերի հոգեւոր առաջնորդ Տեր Մովսես վարդապետ Սարգսյանի գլխավորությամբ Անհայտ կորածներին նվիրված հուշարձանի մոտ կատարվեց հոգեհանգստյան կարգ:

Ներկաները հարգանքի տուրք մատուցեցին եւ ծաղիկներ խոնարհեցին Անհայտ կորած ազատամարտիկների հիշատակին կանգնեցված հուշակոթողին:

«Հայաստանի Հանրապետության տոներ եւ հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքով հունիսի 29-ը նշվում է որպես «Անհայտ կորած ազատամարտիկների հիշատակի օր»:

92 ՄԻԼԻՈՆ ԱՄՆ ԴՈԼԱՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻՆ

Հայաստանի կառավարությունը հավանություն տվեց «Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջեւ ավելի մրցունակ եւ տարբերակված մասնավոր հատվածի շուրջ օժանդակության համաձայնագրի թիվ 15 փոփոխությունը հաստատելու մասին» ՀՀ նախագահի հրամանագրի նախագծին, ըստ որի, ամերիկյան կողմից տրամադրվող հատկացումների ընդհանուր գումարին, որը ներկայումս կազմում է 91 800 980 41 ԱՄՆ դոլար, ավելացվում է 8 200 000 ԱՄՆ դոլար, ուղղվելու է ենթակառուցվածքային ծառայություններին՝ էներգիայի եւ ջրի բարելավման աջակցության ծրագրերին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐՆ ԱՐԴԵՆ ԿԱՐՈՂ ԵՆ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼ ԵՄ ԵՐԿՐՆԵՐ

Եվրախորհուրդը Հայաստանը ներառել է այն երկրների ցուցակում, որի քաղաքացիների համար այլեւս չեն գործում համավարակով պայմանավորված սահմանափակումներ ԵՄ եւ Շենգենյան գոտու տարածք: ԵՄ որոշումն ուժի մեջ կմտնի մինչեւ շաբաթվա վերջ:

Ցուցակից դուրս է մնացել Միացյալ Թագավորությունը, քանի որ դրա տեղում ինտենսիվ տարածվում է կորոնավիրուսի «Դելտա» շտամը:

ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԳՈՐԾՈՎ ԴԱՏԱԽԱԶԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Հուլիսի 1-ին Երեւանի ընդհանուր իրավասության դատարանում Հայաստանի երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի եւ մյուսների գործով դատական նիստում սկսվեց դատաքննության փուլը: Դատախազը հրապարակեց մեղադրական եզրակացության եզրափակիչ մասը:

Հատուկ քննչական ծառայությունում քննված քրեական գործի նախաքննության ընթացքում յեռք բերված ապացույցների համակցության հիման վրա պարզվել է, որ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի կազմակերպմամբ եւ «Ֆլեշ» ՍՊ ընկերության սեփականատեր Բարսեղ Բեգլարյանի դրդմամբ, 2013 թվականի հունվարի 25-ից փետրվարի 7-ն ընկած ժամանակահատվածում Կառավարության պահուստային ֆոնդից վատնվել է պետական աջակցության ծրագրերի իրականացման ընթացքում իրացված 15 մլն 391 հազար 765 լիտր դիզելային վառելիքի համար հատկացված սուբսիդիայի առանձնապես խոշոր չափերով գումարը՝ 489 մլն 160 հազար դրամը:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՀՈՒԼԻՍ

03.07.2021 Քրիստոսի 12 առաքյալների եւ Սուրբ Պողոս 13-րդ առաքյալի հիշատակության օր

Հիսուս Քրիստոսի ընտրած 12 առաքյալները Քրիստոսի աշակերտներն ու Քրիստոսի վարդապետության առաջին տարածողներն էին, հարուցյալ Քրիստոսի վկաները:

Հայ Առաքելական եկեղեցին 12 առաքյալների եւ 13-րդ առաքյալ ճանաչված Պողոս առաքյալի հիշատակը նշում է միասին, Վարդավառից մեկ շաբաթ առաջ, Վարդավառի Բարեկենդանին նախորդող շաբաթ օրը: Հայ եկեղեցու տոնացույցում կան նաեւ առաքյալների հիշատակության առանձին տոներ:

4.07.2021 Բարեկենդան Վարդավառի պահոց

Վարդավառի՝ Հիսուս Քրիստոսի Պայծառակերպության տոնին նախորդող շաբաթապահքը Հայ եկեղեցում կոչվում է Վարդավառի պահք: Պահքի վերջին շաբաթ օրը նավակատիք է, այսինքն՝ այդ օրը թույլատրվում է ձկնեղեն եւ կաթնեղեն օգտագործել:

10.07.2021 Հիշատակ հին տապանակի եւ Նոր Սուրբ եկեղեցու տոն

Հին Ուխտի տապանակը Հին կտակարանի ամենամեծ սրբությունն է, որտեղ պահվում էին Տասնաբանյա պատվիրանների տախտակները, Ահարոնի ծաղկյալ գավազանն ու մանանայով լի ոսկյա սափորը:

Տոնը կատարվում է Վարդավառի՝ Քրիստոսի Պայծառակերպության տոնին նախորդող շաբաթ օրը:

ԵՎՐՈ - 2020

ԵՐԵԿ ՄԵԿՆԱՐԿԵՑ ՄՐՑԱՇԱՐԻ ՄԵԿ ՉՈՐՐՈՐԴ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՓՈՒԼԸ

Հունիսի 29-ին եզրագիծը հատեց ֆուտբոլի Եվրոպայի առաջնության մեկ ութերորդ եզրափակիչը:

Պետք է նշել, որ Եվրոպայի 16-րդ առաջնության դեռեւս խմբային մրցաշարում սկսված անակնկալները շարունակվեցին նաեւ մեկ ութերորդ եզրափակչում: Առաջնության գլխավոր պարգեւի համար պայքարից դուրս մնացին Եվրոպայի չեմպիոն Պուրտուգալիայի, աշխարհի չեմպիոն Ֆրանսիայի, բոլոր առաջնություններում յուրատեսակ ազդակ հաղորդող եւ պարգեւներին հավակնող Գերմանիայի, Նիդերլանդների հավաքականները:

Առաջնության քառորդ եզրափակչի ուղեգիր ստացավ՝ Ուելսին 0:4 հաշվով պարտության մատնած Դանիայի, Ավստրիայի մրցակցությունը նվազագույն՝ 1:2 հաշվով հաղթահարած Իտալիայի, նույնպես նվազագույն՝ 1:0 հաշվով Պորտուգալիային հաղթած Բելգիայի հավաքականները, Չեխիայի հավաքականը, որը 2:0 հաշվով առավելության հասավ Նիդերլանդների նկատմամբ, լրացուցիչ ժամանակում խորվաթներին պարտության մատնած Իսպանիայի եւ ետխաղային 11 մետրանոց հարվածներով Ֆրանսիային մրցաշարից դուրս մղած Շվեյցարիայի հավաքականը, ինչպես նաեւ 2:0 հաշվով Գերմանիային հաղթած Անգլիայի ու 2:1 հաշվով Շվեդիային պարտության մատնած Ուկրաինայի հավաքականները:

Երեկ՝ հուլիսի 2-ին, Շվեյցարիա-Իսպանիա եւ Բելգիա-Իտալիա հանդիպումներով մեկնարկեց մեկ քառորդ եզրափակիչը:

Հուլիսի 3-ին քառորդ եզրափակչի շրջանակներում, Չեխիան կխաղա Դանիայի (ժամը՝ 20:00-ին), Ուկրաինան՝ Անգլիայի (ժամը՝ 23:00-ին) հետ:

ԶԳՈՒՇԱՑԵՔ

ՏԱՊԸ ԿԱՐՈՂ Է ՎՏԱՆԳԱՎՈՐ ԼԻՆԵԼ



Վրաստանում ջերմաստիճանը չափազանց բարձր է, տեղ-տեղ հասնում է 40 աստիճանի:

Հիվանդությունների վերահսկման եւ հանրային առողջության ազգային կենտրոնի մասնագետները զգուշացնում են, որ այս օրերին երկար ժամանակով դրսում գտնվելը կարող է վտանգավոր լինել մարդու կյանքի համար:

Բարձր ջերմաստիճանը ջրազրկում է առաջացնում: Արեւահարումը վտանգավոր է հատկապես սրտի եւ շնչառական խնդիրներ ունեցող մարդկանց դեպքում: Հատուկ ռիսկի խումբը ներառում է 75 եւ բարձր տարիքի անձանց, երեխաներին՝ հատկապես նորածիններին, քրոնիկ եւ հոգեկան հիվանդություններ ունեցող անձանց, ծանր ֆիզիկական աշխատանք կատարողներին, մարզիկներին:

Գլխապտույտի, թուլության, ուժեղ ծարավի կամ գլխացավի դեպքում, շտապ անհրաժեշտ է գնալ զով տեղ, չափել ջերմաստիճանը եւ ջուր խմել: Եթե ախտանշանները պահպանվում են ավելի քան մեկ ժամ, դիմել բժշկի: Բարձր ջերմաստիճանի, չոր մաշկի, տենդի, զառանցանքի, նոպաների, գիտակցության կորստի դեպքում շտապ պետք է շտապօգնություն կանչել:

Բժիշկները նաեւ հորդորում են քաղաքացիներին այս օրերին զգուշանալ արեւայրուքից:

ԼՅՈՒԲԱ ԱԲՐԱՄՈՎԱ-ԽԱՐԱԶՈՎԱ

Ցավոք, իր հոգուն շա՜տ օտար ու հարազատ օրրանից շա՜տ հեռու Ռուսաստանի Սամարա քաղաքում, 88 տարեկանում, վախճանվեց մեր համաքաղաքացին՝ թիվ 132 վրաց–հայկական կրթօջախի ավելի քան 50 տարիների մանկավարժ, ուսմասվար, քաղաքի կրթաշխարհում լավագույն մասնագետի ու նախանձախնդիր ղեկավարի անուն վաստակած Լյուբա Աբրամովա-Խարազովան:

Նա ծնվել էր բնիկ թբիլիսցու գերդաստանում, 1933թ.: Թբիլիսիի Ա.Պուշկինի անվան մանկավարժական ինստիտուտի (այժմ՝ Իլիայի համալսարան) պատմաբանասիրական ֆակուլտետի շրջանավարտի աշխատանքային կենսագրությունը սկսվեց 1960 թվականից ու շարունակվեց կես դար՝ մինչեւ 2011թ.:

Երբ թիվ 21 դպրոցը քաղաքի կենտրոնից տեղափոխվեց Թբիլիսիի «Գլդանիի» զանգված, տրանսպորտային անհարմարությունների պատճառով, շատերը հրաժեշտ տվեցին կրթօջախին: Ընկեր Լյուբան մնացողների շարքերում էր, եւ դա պարզաբանեց խոր ճշմարտությամբ:

Լյուբա Խարազովա մանկավարժը ապրեց ու աշխատեց խղճի թելադրանքով՝ կյանքի ամեն պարագայում մնալով մարդկային: Եվ արժանացավ նրան, ինչին արժանի է ճշմարիտ մանկավարժը՝ գործընկերների ու աշակերտների համընդհանուր հարգանքին:

ՄԻ ԽՈՒՄԲ ԸՆԿԵՐՆԵՐ

«Վրաստան» թերթի խմբագրակազմը ցավակցում է Ֆելիքս եւ Զեմալի Խարազովներին, սիրելի մոր՝

Լյուբա Սիմոնի ԱԲՐԱՄՈՎԱ-ԽԱՐԱԶՈՎԱՅԻ

մահվան կապակցությամբ:



ԽԱՉԲԱՌ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Կարծախում ծնված հայ աշուղ (կեղծանունը): 4.Մշուշով պատված, մշուշով պարուրված: 8.Երկնքի կապույտը: 9.Պտուղ, միրգ: 10.Ոչ առանձին, խմբով: 13.Ուրիշ, տարբեր: 14.Ռուսական ցար: 16.Լիճ Աֆրիկայում: 17.Անտառային, գիշերային թռչուն: 20.Գերմանացի փիլիսոփա-իդեալիստ: 21.Սկզբնակետ, ... կետ: 22.Գրիգոր Զոհրապի նովելներից: 24.Ծառի տեսակ: 26.Լպիրշ, այլասերված: 28.Վրացական ֆիլմ «...յի կապույտը»: 29.Արնածուծ միջատ: 30.Ռուսական ավտոմեքենայի մակնիշ: 31.Երկրաչափական մարմին: 32.... գալ, թափառել: 33.Վերջածանց՝ ..., ոտ, կոտ: 34.Իտալացի կինոռեժիսոր Սերջիո Կորբուչիի ֆիլմերից: 36.Ոչ քիչ, մեծաքանակ: 37.... ու զարդ: 39.Ստեփան Զորյանի պատմվածքի հերոս: 41.Հովհաննես Այվազովսկու ռուսական անունը: 43.«... մի ասա ...» (թեւավոր խոսք): 46.Հիվանդություն: 48.Շեքսպիրի գրական հերոս: 49.Ամեն ինչից տեղյակ, տեղեկացված: 51.«Ինչեր ասես, որ չեն արել այս ձեռքերը, ... կրել, փոշի մաքրել» (Պ.Սեւակ): 52.... ու մուտք:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Ջերմությունը չափող գործիք: 2.Հովհաննես Շիրազի նկարիչ որդին: 3.Բաղնիքի ոտնաման: 4.Կղզիական պետություն Միջերկրական ծովում: 5.Վրաց մեծ գրող Ռուսթավելու անունը: 6.Ե'վ ուկրաինացի գրող Տիչինան, ե'ւ իսպանացի նկարիչ Պիկասոն: 7.Դորպատ քաղաքն այժմ: 11.Վերջին նոտան: 12.Շվեդ քիմիկոս, գյուտարար, դինամիտի ստեղծողը: 15.Ծովափնյա քաղաք Ղրիմում: 17.Ձկան տեսակ: 18.Այծի ձագը: 19.Վանքային համալիր Արցախում: 20.Հայտնի քաղաք Նիդերլանդներում: 23.Ռաֆֆու պատմավեպերից: 25.Վրացական կաթնամթերքի ֆիրմա: 27.Վրաց թագուհի: 29.Քաղաք Վրաստանում: 31.Ընդդիմադիր կուսակցություն Վրաստանում: 33.Երաժշտական լարային նվագարան: 34.Երեւանյան ամսագիր: 35.Չորրորդ ձայնանիշը: 36.Քաղաք Իրանում: 38.Գրիգոր Լուսավորչի հայրը: 40.... ու ասեղ: 42.Սպորտաձեւ: 44.Գրական ստեղծագործություն: 45.Գտա բայը (բրբ.): 47.Փետրվարը հայկական օրացույցում: 50.Վառ կարմիրը:

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Բանավեճ: 9.Աբլամ: 10.Գզիր: 11.Կատարում: 13.Պուրակ: 16.Քոս: 17.Սեր: 19.Լամուկ: 22.Ուիթնի: 24.Բուխարա: 25.Պոլի: 27.Կապարճ: 29.Ազատել: 32.Ամսանուն: 33.Կիսաեփ: 35.Անիս: 37.Սեկ: 39.Լհասա: 40.Հօդս: 43.Կեղ: 44.Մայն: 47.Նիմ: 49.Վավրա: 50.Բրիջ: 53.Թիկա: 54.Գեա: 55.Լավա: 57.Ջուր: 58.Տասնոց:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Թանաք: 2.Մանաս: 3.Նեգուս: 4.Ճարպ: 5.Քլոր: 6.Դմակ: 8.Ճզմել: 12.Տորթ: 14.Ուրախ: 15.Ապուր: 18.Դիոր: 19.Լուիզա: 20.Մարտունակ: 21.Կարլ: 23.Նպատակ: 26.Լճափ: 28.Ամիս: 29.Ասա: 30.Անահ: 31.Ենիսեյ: 34.Սենյակ: 36.Սաղ: 38.Ադի: 41.Օնագր: 42.Սմբատ: 45.Ավիշ: 46.Նվազ: 48.Նիլս: 51.Ջան: 52.Հաց: 56.Վո:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ՀՅԵՑՈ ՄՈՆԱՅԱՐՄՈ: ԹԲԻԼԻՍԻ 0105, Գ.ԱՔՈՆԵԼԻՆ ՓՈՂՈՑ 5.
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աքոնելի փ. 5
ՏԵԼ. ՀԵՌ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ՎՐԱՍՏԱՆՈ»
ԹԲԻԼԻՍԻՆ, ՎՐԱՍՏԱՆԻ
"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445